Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ <ՀՀ Արարատի մարզի Նորաբացի Միսակ Ապելյանի անվան միջնակարգ դպրոց> ՊՈԱԿ-ի պատմության / 17ժամ/ , ֆիզկուլտուրայի /9 ժամ/ և երաժշտության /2 ժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1),

2.Փաստաթուղթ (դիպլոմ)՝, Հանրակրթության մասին ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3.Անձնագրի պատճենը,

4.Ինքնակենսագրություն (Ձև 4),

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար՝ 3x4 չափի

7. Այլ պետությունների քաղաքացիները՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9.00-ից 15.00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 9-ին 15.00-ին ՀՀ Արարատի մարզի Նորաբացի Մ. Ապելյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Արարատի մարզ , գյ. Նորաբաց :

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094238080, 0236-6-26-49 հեռախոսահամարներով: